Տիգրան Ղազարյան[1]

«Է»-Ի ԵՎ «ՊԵՏՔ Է»-Ի ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑՈՒՄ

Դրական իրավունքի անբաժանելի մասնիկը՝ «ատոմը», նորմն է: Սակայն, նորմն միշտ արտահայտվում է որևէ մատերիայում: Այդ մատերիան լեզվական միավորն է՝ նշանը, որի միջոցով ձևակերպվում է նորմատիվ նախադասությունը[2]: Նորմատիվ նախադասությունն ինքնին կոնկրետ բնական կամ ձևական լեզվի քերականության կանոններով և սկզբունքներով պայմանվորված հասկացություն է:

Նորմատիվ նախադասության իմաստը նորմն է[3]: Նորմատիվ նախադասությունն ինքնին արտահայտման առումով երկբնույթ է: Այսինքն, այն և՛ կարող է արտահայտել նորմ, և՛ նորմի գոյության փաստը հավաստող դատողություն[4]: Եթե այն ձևակերպվում է պատվիրագրերի լեզվի միջոցով, ապա արտահայտում է նորմ[5]: Եթե այն օգտագործվում է նկարագրողական (դիսկրիպտիվ) լեզվի միջոցով, ապա այն արտահայտում է նորմատիվ դատողություն[6]:

---

[1] ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի.գ.դ., պրոֆեսոր Ա. Գ. Վաղարշյան:

[2] Տե՛ս *Wright, G.* Norm and action. 1st ed. London: Routledge and Kegan Paul. 1963. P. 93, 105.

[3] Տե՛ս Bulygin, E. Objectivity of Law in the View of Legal Positivism. *Analisi e diritto*, 2004. P. 225.

[4] Ibid.

[5] Տե՛ս *Wright, G.* Norm and action. 1st ed. London. P. 105

[6] Տե՛ս *Bulygin, E.* True or False Statements in Normative Discourse// in Egidi, R. In search of a new humanism. 1st ed. Dordrecht: Kluwer Academic. 1999. P 184, *Wright, G.* 1983. Norms, Truth And Logic // Practical Reason, Philosophical Papers, / ed. Wright, Georg Henrik von. Ithaca, N. Y.: Cornell University Press. P. 131, *Mazzarese, T. Norm Proposition*: *Epistemic and Semantic Queries.* Rechtstheorie, Vol. 22. 1991. pp. 39-70, *Казарян Т. М.* Методы анализа норм права в аналитической философии права// Проблемы методологии и философии права// Проблемы методологии и философии права: сб. ст. междунар. круглого стола. 28 февраля 2014 г. Самара: Самар. гуманит. акад., 2014. С. 36-46.

Նորմի և նորմատիվ դատողության տարանջատումը հիմնվում է «Է»-ից (դիսկրիպտիվ նախադասություններից) «պետք է»-ի (պրեսկրիպտիվ նախադասությունների) դեդուկտիվ դուրսբերման անհնարինության հյումյան թեզի վրա[1]:

19-րդ դարում, խոշոր իրավագետ-պոզիտիվիստ Ջ. Օսթինն օգտագործելով հյումյան թեզի տրամաբանական հետևանքները՝ դրեց վերլուծական իրավագիտության հիմքը[2]: Վերլուծական իրավագիտության խնդիրն էր դրական իրավունքի նորմատիվ փաստերի նկարագրությունն՝ այնպես «ինչպես, որ է», և ոչ այնպես ինչպես «պետք է լինի»:

20-րդ դարի սկզբին որոշ տրամաբանական պոզիտիվիզմի փիլիսոփայության ներկայացուցիչներ կասկածի տակ դրեցին նկարագրողական նախադասություններից՝ պատվիրագրող նախադասությունների դուրսբեման անհնարինության հյումյան թեզը: Այս սկեպտիցիզմն առաջ է բերում դրական իրավունքի ուսումնասիրման հետ կապված հետևյալ հարցերը:

Առաջին՝ այս հարցը կապված է դրական իրավունքի ուսումնասիրման լեզվի սեմանտիկ բնույթի հետ: Եթե հնարավոր է՝ «Է»-ով նախադասություններից բխեցնել «պետք է»-ով նախադասություններ, ապա իրավունքի ուսումնասիրման լեզուն ոչ միայն գործ ունի դրական իրավունքի նորմատիվ փաստերի օբյեկտիվ արտահայտման և վերլուծության հետ, այլև դրա բարոյական, էթիկական քննադատության հետ:

Երկրորդ՝ այս հարցը կապված է նաև իրավունքի ուսումնասիրման լեզվի մեթոդաբանության հետ: Եթե հնարավոր է «Է»-ով նախադասություններից բխեցնել «պետք է»-ով նախադասություններ, ապա դրական իրավունքի օբյեկտիվ նկարագրությանը ոչ միայն կազմվում է նորմատիվ դատողությունների միջոցով, այլև դրա գնահատման՝ պրեսկրիպտիվ (պատվիրագրող), նախադասությունների միջոցով:

Երրորդ՝ այս հարցը կապված է իրավունքի հասկացութային-տեխնիկական լեզվի սահմանների հետ: Եթե հնարավոր է «Է»-ով նախադասություններից բխեցնել «պետք է»-ով նախադասություններ,

---

[1] Տե՛ս *Hume, D.,* A treatise of human nature. 1st ed. [Waiheke Island]: Floating Press. 2009. P. 715.

[2] Տե՛ս *Austin, J.,* The Province Of Jurisprudence Determined. Cambridge: Cambridge University Press, 1995. P. 18

ապա՝ իրավունքի հասկացութային-տեխնիկական լեզուն ամբողջությամբ չի հիմնվում միայն դրական իրավունքի սոցիալական իրականության վրա (ձևավորման, գործողության և կիրառման): Այլ նաև հիմնվում է կորպորատիվ, բարոյական և էթիկական պատվիրագրերի վրա:

Այսպես, անդրադառնանք հյուսման թեզի ժխտողների փաստարկներին առանձին-առանձնին:

Տրամաբանական պոզիտիվիզմի վենական խմբակի հիմնադիր, գերմանացի փիլիսոփա Մ. Շլիքն պնդում է, որ եթե X-ն ունի իրավական պարտականություն անելու p գործողությունը, ապա X-ն պետք է անի p գործողությունը[1]: Այսպիսով, Շլիքն բացառում է նկարագրողական նախադասություններից պատվիրագրող նախադասությունների դուրսբերման անհնարինությունը և կասկածի տակ է դնում ամբողջ հյուսման թեզի հիմնավորվածությունը:

Առաջին հայացքից թվում է, թե Շլիքի դատողությունը ճշմարիտ է: Սակայն, դա այդպես չէ: Շլիքը թույլ է տալիս նորմատիվ փաստարկման սեմանտիկ սխալ՝ խառնելով նորմատիվ դատողությունը և նորմը: Նորմատիվ դատողության օբյեկտն հենց նորմն է: Այսինքն, ինչպես նշեցինք վերևում, նորմատիվ դատողությունը տեղեկություն է հայտնում նորմի (բովանդակվող արգելքի, պարտադրանքի կամ թույլտվության) մասին: Այն կարող է լինել ճշմարիտ (օբյեկտիվ) կամ սխալ (ոչ օբյեկտիվ): Ըստ այդմ՝ նորմատիվ դատողությունը ճշմարիտ է, եթե և միայն եթե՝ նորմատիվ դատողության օբյեկտին վերագրվող հատկությունը կամ հարաբերությունն գոյություն ունի: Եվ սխալ է, եթե և միայն եթե՝ նորմատիվ դատողության օբյեկտին վերագրվող հատկությունը կամ հարաբերությունը գոյություն չունի:

Այսպես, Շլիքի բերված օրինակում X-ն ունի իրավական պարտականություն անելու p, ոչ այլ ինչ է, քան նորմատիվ դատողություն: Այն կլինի ճշմարիտ, եթե միայն կա նորմ, ըստ որի X-ն ունի իրավական պարտականություն անելու p արարքը: Եվ համատասխանաբար սխալ՝ եթե X-ն չունի իրավական պարտականություն անելու p գործողությունը: Այսինքն, եթե այս նորմատիվ դատողությունը ճշմարիտ է, ապա իր հիմքում ունի նորմի գոյության փաստը:

---

[1] Տե՛ս *Schlick, M.* Problems of ethics. 1st ed. New York: Dover Publications. 1962. P. 110.

Սակայն, հենց բուն նորմը սխալ կամ ճշմարիտ լինել չի կարող: Նորմը պատվիրագրում է որոշակի արարքի կատարման պարտադիրությունը, արգելքը կամ թույլտվությունը: Այսինքն՝ բուն նորմն ոչինչ չի նկարագրում: Քանի որ այն պատվիրագիր է:

Սակայն, այստեղ հարց է առաջանում. «արդյո՞ք նորմի բովանդակությունը ինքնին նկարագրություն չէ»:

Օրինակ, առկա է իրավանորմ N_i, ըստ որի (բովանդակության)՝ X-ն պետք է անի p գործողությունը: Սա նկարագրություն չէ, որովհետև այս նորմը, ինչպես և բոլոր նորմերը կամ պատվիրագրերը չեն նկարագրում ներկա կամ առկա իրերի վիճակ: Այլև այն ուղղված է բոլոր այն ապագա դեպքերին, որի ընթացքում պետք է տեղի ունենա p գործողությունը: Այսինքն՝ նորմը (պատվիրագիրը) ապագային ուղղված վարքագծի կանոն է, բայց ոչ այն իմաստով որ այն գուշակում է կամ նկարագրում է ապագան: Այլև այն իմաստով, որ սուբյեկտն պետք է կատարի պատվիրակված արարքը՝ կոնկրետ, ապագա դեպքում:

Սակայն, հնարավոր է, որ p գործողությունն, այնուամենայնիվ, տեղի չունենա, այսինքն՝ սուբյեկտն չկատարի իրեն պատվիրագրված արարքը: Այս դեպքում, դատողությունն ըստ որի սուբյեկտն չի կատարել կամ խախտել է իրեն պատվիրագրված արարքը՝ կլինի ճշմարիտ: Սակայն, սա արդեն փաստի նկարագրություն է, ոչ թե՝ նորմի (պատվիրագրի)[1]:

Այսպես, ինչպես երևում է, Մ. Շլիքի պնդումն է-ից (նկարագրական նախադասություններից)՝ «պետք է»-ի (պրեսկրիպտիվ նախադասությունների) դուրսբերման մասին՝ անհիմն են:

---

[1] Այսպես նորմի և նորմի կատարման վերաբերյալ դատողության չտարանջատման արդյունքում առաջացած խառնաշփոթի արդյունք է: Հայտնի փիլիսոփա, տրամաբանական պոզիտիվիստ Մ. Մորիցը պնդումն՝ «է»-ից «պետք է»-ի դուրսբերման հնարավորության վերաբերյալ: Մորիցը պնդում է, որ եթե մի արարք պարտադիր է, ապա այն դեռևս չի կատարվել և այդ արարքը պարտադիր չէ, եթե կատարվել է: Այսինքն՝ ըստ Մորիցի նորմն ու դրա իրացումն ունեն հակառակ գոյության մոդուսներ: Եթե առկա է նորմը, ապա չկա իրացումը, եթե կա իրացումը, ապա նորմը բացակայում է: - Տե՛ս *Moritz M.* Uber den Satz. Die Handlung H ist Pflicht, Theoria, Vol. 17 (1-3). 1951. pp. 176-182.

«Է»-ից «պետք է»-ի դուրսբերման այլ փորձ հանդիպում ենք տրամաբանական պոզիտիվիզմի ներկայացուցիչ, փիլիսոփա Մ. Բլեքի մոտ[1]: Բլեքն պնդում է, որ այն նորմերը, որոնք ձևակերպված են «միջոց-նպատակ» սկզբունքով, պարունակում են և՛ նկարագրող, և՛ լիազորող մասեր: Այդպիսի նորմի օրինակ, ըստ Բլեքի, կարող է ծառայել շախմատում հայտնի կանխադրույթ-կանոնը. «եթե ուզում ես անել մատ, ապա՝ պետք է անես քայլ»:

Առաջին հայացքից այս ձևակերպումը թվում է, թե նկարագրություն է: Սակայն, այս դեպքում էլ՝ դա այդպես չէ: Օրինակ, պատկերացնենք, որ այս շախմատային կանոնի նման մի նորմ գոյություն ունի որևէ իրավական համակարգում, ըստ որի «եթե ցանկանում ես լինել իրավահպատակ, պետք է չխախտես իրավանորմերը»: Որքան էլ ձևակերպումը տարօրինակ թվա, պատկերացնենք, որ մի օրենսդիր նման մի նորմ ընդունել է: Նրա դեոնթիկ տրամաբանական ձևակերպումն կունենա հետևյալ տեսքը՝ O (p→q). այս ձևակերպումը նշանակում է՝ պետք է լինի դեպք, երբ տեղի ունենա p-ն, պետք է նաև տեղի ունենա q-ն: Երևում է, որ սա պատվիրագիր է (ապագային ուղղված վարքագծի կանոն)՝ անկախ նրա տարօրինակ ձևակերպումից: Այսինքն՝ այստեղ նկարագրություն չկա: Խառնաշփոթի պատճառն «պետք է»-ի ձևակերպման վայրն է նախադասության մեջ: Թվում է, թե այստեղ նորմ է միայն «պետք է չխախտես իրավանորմերը» ձևակերպումը: Իսկ առաջին մասը, «եթե ցանկանում ես լինել իրավահպատակ» նկարագրություն է: Բայց, ինչպես ցույց տվեցինք, այն այդպես չէ: Այս արտահայտությունն՝ իր ամբողջությամբ է նորմ և ոչ թե մի մասով:

Այս դեպքում հարց է առաջանում, թե ինչու՞ է «պետք է»-ն գտնվում նախադասության երկրորդ մասում: Այս նախադասության երկրորդ մասում գտնվող «պետք է»-ն դա նորմ չէ կամ պատվիրագիր: Դա տեխնիկական կամ նորմատիվ անհրաժեշտություն է[2]: Այսինքն,

---

[1] Տե՛ս *Black, M.* The Gap Between "Is" and "Should". The Philosophical Review, 1964. pp. 165-181.

[2] Տե՛ս *Bon, F.* Grundzüge der wissenschaftlichen und technischen Ethik. Leipzig: W. Engelmann. 1896. S. 96, *Wright, G.* Is and ought// Bulygin, E., Gardies, J. and Niiniluoto, I. Man, law, and modern forms of life. 1st ed. Dordrecht, Holland: D. Reidel Pub. Co. 1985. P. 274.

դա «միջոց-նպատակ» կապող կապակցություն է՝ p→(Oᵢq)[1]: Իսկ պատվիրագիր կամ նորմ է ամբողջ նախադասությունը՝ «եթե ցանկանում ես լինել իրավահպատակ, պետք է չխախտես իրավանորմերը»: Պատվիրագիրն կամ պատվիրագրի «պետք է»-ն տվյալ նորմում ի հայտ է գալիս միայն դրա դեոնթիկ տրամաբանական ձևակերպման ժամանակ (ինչը և մենք ներկայացրեցինք վերոնշված պարբերության մեջ):

Այն նորմերը, որոնք պարունակում են այս տեխնիկական «պետք է»-ն, այսինքն՝ «միջոց-նպատակ» կապող «պետք է»-ն՝ իրավագիտության և տրամաբանության մեջ կոչվում են տեխնիկական նորմեր կամ դիրեկտիվներ[2]:

Այսպես, Բլեքի բերված «է»-ից «պետք է»-ի դուրսբերման օրինակը՝ անհաջող է: Քանզի այստեղ չկա որևէ փաստացի վիճակի նկարագրում:

Այլ փաստարկ «է»-ից «պետք է»-ի դուրսբերման հնարավորության օգտին բերում է վերլուծական փիլիսոփա Ջ. Սյորլը[3]: Ըստ Սյորլի՝

Կանխադրույթներ.

1. X-ը խոստանում է անել p գործողությունը:

2. Խոստանալով անել p-ն՝ X-ն իրեն վրա է վերցնում պարտականությունը:

Եզրահանգում.

3. Այսպիսով Ա-ն պետք է անի p-ն:

Սյորլի այս օրինակն էլ, ինչպես մյուս օրինակները խառնաշփոթի արդյունք է: X-ն պարտականության տակ է ընկնում ոչ թե՝ խոստման պատճառով, այլև պատվիրագրի պատճառով: Քանի որ առկա է էթիկական կամ իրավական նորմ, որ խոստումները պետք է կատարվեն, ըստ այդմ էլ X-ն խոստում տալով՝ կրում է դա կատարելու

---

[1] Տե՛ս *Wright, G.* 1983. Norms, Truth And Logic // Practical Reason, Philosophical Papers, / ed. Wright, Georg Henrik von. Ithaca, N.Y.: Cornell University Press. P. 152-153.

[2] Սա այն է ինչին փիլիսոփաներ Ի. Կանտն ու Ռ. Մ. Հեյրն անվանում են հիփոթետիկ իմպերատիվներ: Տե՛ս *Hare, R.* The language of morals. 1st ed. Oxford [Eng.]: Clarendon Press. 1952. P. 33, *Kant, I. and Vorländer, K.* Grundlegung zur Metaphysik der Sitten. 1st ed. Hamburg: F. Meiner. 1965. S. 49.

[3] Տե՛ս *Searle, J.* Speech acts. 1st ed. London: Cambridge University Press. 1969. P. 177.

պարտականությունը: Այլ կերպ ասած՝ X-ի պարտականության առաջացման պատճառ ոչ թե իր տված խոստումն է, այլև նորմը, որը պարտադրում է յուրքանչյուրն կատարել տված խոստումները:

Նույն կերպ հանրային և մասնավոր իրավունքնում կան պարտականությունների կատրաման անհրաժեշտության սկզբունքը, որը առկա է և միջազգային իրավակարգում, և ներպետական իրավակարգերում: Այսպես, սուբյեկտը կաշկանդված է ոչ թե «ipso facto» իր խոստումի ուժով, այլ պարտադրող նորմով, որը պատվիրագրում է ստանձնած պարտականությունների կատարում:

Եզրակացություն. Այսպիսով, դրական իրավունքի օբյեկտիվությունը նախևառաջ իմաստաբանկան հասկացություն է: Դա կապված է դրական իրավունքի վերաբերյալ նորմատիվ դատողությունների ճշմարտության հետ[1]: Այսպես, դրական իրավունքի օբյեկտիվ նկարագրության համար անհրաժեշտ են, որպեսզի դրական իրավունքի (նորմատիվ համակարգի) վերաբերյալ մեր դատողությունները լինեն ճշմարիտ: Օրինակ, եթե «LS» իրավական համակարգում p արարքն արգելված է q դեպքում, ապա դատողությունը, որ «LS» իրավական համակարգում p արարքն արգելված է q դեպքում կլինի ճշմարիտ: Իսկ դատողությունը, որ «LS» իրավական համակարգում p արարքն արգելված չէ q դեպքում կիլինի սխալ, քանի որ p արարքն արգելված է q դեպքում:

---

[1] Տե՛ս *Казарян Т. М.,* Объективность права и морали с позиции аналитической философии права// Этические и антропологические характеристики современного права в ситуации методологического плюрализма: сб. науч. тр. под общ. ред. В. И. Павлова, А. Л. Савенка. Минск: Акад. МВД, 2015, с. 184-192.

Тигран Казарян
Аспирант кафедры теории и истории государства и права ЕГУ

СООТНОШЕНИЕ «СУЩЕГО» И «ДОЛЖНОГО» В ВОПРОСЕ ОБЕКТИВНОСТИ ПОЗИТИВНОГО ПРАВА

Объективность позитивного права, в первую очередь является семантической категорий. Оно связано с истинностью нормативных предложений. Так, для объективного описания правовой системы необходимы, чтобы все нормативные высказывания были истинными. Например, если есть правовая система LS в котором запрещается p в случаях q, то предложение, что в LS запрещено p в случаях q, является истинным. И если в правовой системе LS не запрещено (разрешено) p в случаях q, то предложение, что LS запрещает p в случаях q, является ложным.

Tigran Ghazaryan
PHD Student at the YSU Chair of Theory of State and Law

THE RELATION BETWEEN «IS» AND «OUGHTt» IN THE OF POZITIW LAW'S OBJECTIVITY

First of all, objectivity of law is a semantic category. It is tied with the truth value of normative propositions. So, for the objective description of legal system is necessary that all normative propositions which provide information about this system to be true. For instance, if there is a legal system LS where the action p is prohibited in the case q, then the normative proposition that in LS p is prohibited in the case q is true. And if the p is not prohibited in the case q, then the proposition that in LS p is prohibited in the case q is false.

Բանալի բառեր: *նորմատիվ նախադասություն, նորմատիվ դատողություն, նորմ, հյումյան տրամաբանական պարադոքս:*
Ключевые слова: *нормативное предложение, нормативное высказывание, норма, юмовский логический парадокс.*
Key words: *norm-formulation, norm-proposition, norm, Hume's guillotine.*